



# ԳՅՈՒՄՐՈՒ ՎԱՐԴԱՆ ԱՃԵՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ


ՃԱՐՏԱՐԱՊԵՏ՝ ՍԱՄՎԵԼ ՍԱՖԱՐՅԱՆ

1972

Գյումրու Վարդան Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնը հիմնադրվել է 1928 թվականին (մինչև 1992թ.՝ Ասքանազ Մռավյանի անվան, մինչև 1938թ.-ը կոչվել է նաև Երկրորդ պետթատրոն):

Դեռևս 1930-ականների վերջին թատրոնի նոր շենքի կառուցման որոշում է ընդունվում: Շենքի նախագծումը վստահվել էր այն ժամանակ երիտասարդ ճարտարապետ Սամվել Սաֆարյանին: Թատրոնի նախագծում Սաֆարյանը հիմնվել էր թամանյանական դպրոցի ստեղծագործական սկզբունքների վրա, որոնք համահունչ էին ստալինյան ճարտարապետության գաղափարախոսությանը:

Հայրենական պատերազմի տարիներին թատրոնի նախագծումը դադարեցվել էր, և միայն 1962 թվականին Սաֆարյանը վերսկսում է նախագծման աշխատանքները: Նա կազմում է լիովին նոր նախագիծ /համահեղինակ՝ ճարտ. Ռուլան Բաղդասարյան/: Այդ ժամանակ Լենինի հրապարակն արդեն կառուցապատված էր, և թատրոնի շենքի կառուցման համար ընտվում է այլ վայր՝ Սայաթ-Նովա փողոցի երկայնքով՝ կարմիր գծից 50 մետր նահանջով, փոքրիկ բլրի վրա: Թատրոնի շինարարությունը մեկնարկում է 1965 թվականին, և շենքը շահագործման է հանձնվում 1972 թվականին: Թատրոնի շենքի առաջին քարը դրել է ՀՍՍՀ ժողովրդական դերասան Լևոն Չոհրաբյանը:





# ԱՍԼԱՄԱՁՅԱՆ ՔՈՒՅՐԵՐԻ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՅ

1880




Շենքը, որտեղ հիմա գործում է Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի պատկերասրահը, կառուցվել է 1880-ականներին՝ մեծահարուստ վաճառականներ Քեչիշովների ընտանիքի կողմից:

1880-ականներից մինչև 1912 թվականն այս շենքում գործել է օրհորդաց պրոգիմնագիան /հետագայում՝ «Օլգինյան օրհորդաց գիմնագիա»/: Այն աղջիկների համար նախատեսված առաջին աշխարհիկ կրթօջախն էր Ալեքսանդրապոլում:

Քեչիշովների տունը որպես պատկերասրահ ընտրվել է Ասլամազյան քույրերի ցանկությամբ: Շրջելով քաղաքով և ուսումնասիրելով տարբեր կառույցներ՝ նրանք ընտրել են հենց այս մեկը:

Բացումը տեղի է ունեցել 1987 թվականի նոյեմբերի 6-ին: Բացմանը ներկա է գտնվել Մարիամ Ասլամազյանը: 1988 թվականի երկրաշարժին շենքը վնասվել է:







# ԳՅՈՒՄՐՈՒ ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՇԵՆՔ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏ՝ ԶԱՎԵՆ ԲԱԽՇԻՆՅԱՆ

1952

Ներկայիս Գյումրու Արվեստների ակադեմիայի շենքը կառուցվել է 1952 թվականին ճարտարապետ Չավեն Բախշիյանի նախագծով: Այն կառուցվել է որպես ՀԿԿ Լենինականի քաղաքային կոմիտեի շենք:

1988-ի երկրաշարժին կառույցի ճակատի վերին հատվածը վնասվել էր, մասնավորապես, քանդվել էր կառույցի ֆրոնտոնը և դրա տակի կամարաշարը:

Շենքը վերակառուցելու և այնտեղ Արվեստի ակադեմիա հիմնելու նպատակով Լորիս Ճգնավորյանը կազմակերպեց դրամահավաք՝ Երևանից Գյումրի ուխտագնացության դուրս գալով: Նրա այս նախաձեռնությանը մեծապես աջակցեց քաղաքի Մշակույթի բաժնի վարիչ Հասմիկ Կիրակոսյանը:

Շենքում հիմա գործում են Երևանի պետական կոնսերվատորիայի, կինոյի և թատրոնի պետական ինստիտուտի և գեղարվեստի ակադեմիայի Գյումրու մասնաճյուղերը:







# «ԳՈՒԼՊԱՅԻ ՖԱԲՐԻԿԱՅԻ ՀԱՄԱԼԻՐ»

ՃԱՐՏԱՐԱՊԵՏ՝ ՏԻՐԱՆ ԵՐԿԱՆՅԱՆ

1950-ական



Լենինականի գուլպեղենի և տրիկոտաժեղենի ֆաբրիկայի վարչական /«Չուլոչնու»/ շենքի քարե ժամացույցով աշտարակի լուսանկարը 1988-ի աղետալի երկրաշարժի օրերին շրջեց ամբողջ աշխարհով՝ դարձնելով շենքը Գյումրու ամենաճանաչված կառույցն աշխարհում:

Շենքի հեղինակն ականավոր հայ ճարտարապետ Տիրան Երկանյանն է, ում հեղինակած կառույցները դարձել են Երևանի և Գյումրու ճարտարապետական խորհրդանիշները:

Լենինականի գուլպեղենի և տրիկոտաժեղենի ֆաբրիկան սկիզբ է առնում Լենինականի մանվածքային ֆաբրիկայի փոքր արտադրամասից, որը կառուցվել էր 1924 թվականին: Հետագայում՝ 1928-ին, այդ արտադրամասին տրամադրվել է Ձիթողյանների գարեջրի գործարանի մասնաշենքը: Մինչ երկրաշարժը ժամացույցն ունեցել է ղողանջներ, որի մեղեդին հեղինակել է հռչակավոր կոմպոզիտոր Արամ Խաչատրյանը:

Երկրաշարժի և, միաժամանակ, հայ ժողովրդի տոկունության և վերածննդի խորհրդանիշ դարձած ժամացույցի ղողանջը «Բամբի» խումբն օգտագործել է իր Earthquake Second Wave Dying Fall /5.10/ երաժշտական կոմպոզիցիայի մեջ:







## «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏ՝ ՌԱՖԱՅԵԼ ԵՂՈՅԱՆ

1975

«Մայր Հայաստան» հուշահամալիրը մեծ հանդիսավորությամբ բացվել է 1975 թվականին, երբ տոնում էին Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի 30-ամյակը: Խորհրդային տարիներին հուշահամալիրի պաշտոնական անվանումը եղել է «Աշխատանքային փառքի և Հայրենական պատերազմում զոհվածների հուշարձան»: Կոթողի հեղինակներն են քանդակագործներ Արա Սարգսյանը, Երեմ Վարդանյանը և ճարտարապետ Ռաֆայել Եղոյանը:

Համալիրում գերիշխում է բարձունքին վեր խոյացող երիտասարդ կնոջ հսկա արձանը, որը խորհրդանշում է Նոր Հայաստանը: Կնոջ մի ձեռքում հաղթանակ և խաղաղություն խորհրդանշող դափնեճյուղն է, մյուս ձեռքում՝ խոյակ, որը հայ ժողովրդի ստեղծագործ ոգու խորհրդանիշն է: Կնոջ արձանի էսքիզի հեղինակն Արա Սարգսյանն է:

Քաղաքապետարանի նախաձեռնությամբ (քաղաքպետ Ս.Բալասանյան) հուշահամալիրի շատ հատվածներ նորոգվեցին, տեղադրվեց արձանի պատվանդանի բացակայող դուռը, նորոգվեցին հերոս քաղաքների հուշակոթողները: Տարածքում իրականացվեցին կանաչապատման աշխատանքներ, կառուցվեց հուշաղբյուր:





# ՍԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱԼԱՏ

1930




Եզոր Սևյանի անվան մշակույթի պալատը կառուցվել է երկաթուղու աշխատողների և թաղամասի բնակիչների հասարակական և մշակութային կյանքը կազմակերպելու համար: Այն գտվում է կայարանամերձ հրապարակում:

1931 թվականին ակումբի դիմաց կանգնեցվել է ականավոր քանդակագործ Արա Սարգսյանի կերտած «Մայիսյան ապստամբության հերոսներին» հուշարձանը, որը հանրապետությունում առաջին նշանակալից մոնումենտալ քանդակն էր:

Մշակույթի պալատի /հեղինակն անհայտ է/ ծավալատարածական լուծումները տիպիկ են այդ թվերին տարածում գտած կոնստրուկտիվիստական ոճի համար: Միևնույն ժամանակ, շենքին հանդիսավորությունն հաղորդող սյունազարդ ճակատը լուծված է դասական ոճով:

Մշակույթի կենտրոնի ճեմարանի պատերից մեկի վրա պահպանվել է 16 մետր երկարությամբ ու չորս մետր բարձրությամբ իրականացված խճանկարը: Հեղինակը Հայաստանի Հանրապետության վաստակավոր նկարիչ, ծնունդով գյումրեցի Ֆերդինանդ Մանուկյանն է: Աշխատանքը կոչվում է «Սասունցիների պարը» (1976):







# ՇԻՐԱԿԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՇԵՆՔ



ՀԵՂԻՆԱԿ՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱՋԱՋՆՈՒՆԻ

1935

1935 թվականին Հ. Քաջազունու Նախագծով Լենինականում կառուցվում է այսպես կոչված «Լոդկա» շենքը: Շենքի հորինվածքը կանխորոշված էր Բուլվարնայա և 27-րդ (Ներկայիս Ռիժկով և Վարպետաց) փողոցների հատման սուր անկյունով: Շենքն իր ուրվագծով նավ է հիշեցնում, որտեղից էլ առաջացել է «Լոդկա» անվանումը, ինչը ռուսերենից թարգմանաբար նշանակում է «նավակ»:

Թեև այս շենքի ոճական լուծումները միանգամայն ինքնատիպ էին, այն կատարելապես համահունչ էր Լենինականի արդեն իսկ ձևավորված քաղաքային միջավայրին: «Լոդկայի» երկրորդ հարկի շախմատաձև գոտին, կամարազարդ մուտքերը, հիշեցնում են Անիի միջնադարյան ճարտարապետությունը:

1950-ականներից մինչև 1988-ի երկրաշարժը «Լոդկա» շենքի անկյունային մասում գործում էր Լենինականի կենտրոնական գրադարանը: Մի քանի տարի առաջ այստեղ իր դռները բացեց հոգևոր գրականության «Ճոճոան» կոչվող գրախանութը: Այս անսովոր անվանումը գրախանութը «ժառանգել է» այստեղ նախկինում գտնվող կտորեղենի խանութից, որի փայտյա մանրահատակը քայլելիս ճոճում էր հաճախորդների ոտքերի տակ:







# «ԿՈՒՄԱՅՐԻ» ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՀԱՆԳՐՎԱՆ

## ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐ՝ ՌԱՖԱՅԵԼ ԵՂՈՅԱՆ ԱՇՈՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ

### 1975

Լենինականի «Կումայրի» զբոսաշրջային հանգրվանը, որն ավելի հայտնի էր «Տուրբազա» անվանումով, կառուցվել է 1975 թվականին ճարտարապետներ Ռաֆայել Եղոյանի և Աշոտ Վարդանյանի նախագծով: Այն կառուցվել է Լենինականի Բուսաբանական այգուն հարող տարածքում՝ Չերքեզի ձորի մոտակայքում: Շենքի հիմքերը փորելուց բացահայտվել է հարուստ հնագիտական շերտ:

Հնագետ Սերգեյ Հարությունյանի ղեկավարությամբ անցկացված պեղումների արդյունքում այս տարածքում հայտնաբերվել է հին Կումայրի բնակավայրը: Կառույցի կոմպոզիցիան տիպիկ մոդեռնիստական էր՝ այն բաղկացած էր 12 հարկանի ուղղանկյունաձև և միահարկ բոլորածև մասնաշենքերից, որոնք միմյանց հետ կապվում էին երկհարկանի հորիզոնական մասնաշենքի ծավալով: Հյուրանոցի բարձրահարկ մասնաշենքը պայթեցվեց 1989 թվականի փետրվարի 17-ին:

Կառույցի բոլորածև հատվածը՝ կինոդահլիճը, պահպանվել է: Չնայած որ այդ հատվածը կիսաքանդ է և շրջապատված է տնակներով, այն դարձել է հետաքրքիր զբոսաշրջային այցելավայր՝ վերածվելով մոդեռնիստական ճարտարապետության «հուշ-կառույցի»:





# ՄԵՐԳԵՅ ՄԵՐԿՈՒՐՈՎԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ

1869



Մերկուրովների առանձնատունը կառուցվել է 1869 թվականին: Մերգեյ Մերկուրովն այս տունը կտակել էր քաղաքին՝ պայմանով, որ այն ծառայի որպես մշակութային օջախ:


Խորհրդային մեծանուն քանդակագործ Մերգեյ Մերկուրովի տուն-թանգարանը բացվել է Լենինականում 1984 թվականին:

Թանգարանի ստեղծման գործընթացը սկսվել է 1979 թվականին՝ Լենինականի Քաղկոմի 1-ին քարտուղար Ռոբերտ Արզումանյանի և մի խումբ մտավորականների նախաձեռնությամբ:

Թանգարանի ստեղծման գործընթացին զուգահեռ մշակվում էր «Կումայրի» պատմա-ճարտարապետական արգելոց-թանգարանի ստեղծման նախագիծը, որն իրականացվեց Լենինական քաղաքի գլխավոր ճարտարապետ Սաշուր Քալաշյանի և Հայպետնախագիծ ինստիտուտի 4-րդ արվեստանոցի ղեկավար Ավետիք Միրիջանյանի կողմից:

Տուն-թանգարանի շենքը 1988 թվականի երկրաշարժին մասամբ վնասվել էր և տարիներ շարունակ չէր գործում: Այն վերականգնվել է «Լինսի» հիմնադրամի կողմից 2003 թվականին:

Հետագայում, ստորգետնյա ջրերի պատճառով, թանգարանի շենքը խոնավացել էր, և 2016 թվականին կրկին վերանորոգվել է Մերկուրովի թոռան՝ Անտոն Մերկուրովի աջակցությամբ:






# ԳՅՈՒՄՐՈՒ ԿԵՆՑԱՂԻ ԹԱՆԳԱՐԱՆ



1872



Թանգարանի ստեղծման գործընթացը սկսվել է 1970-ականների վերջին, Լենինականի կոմկուսի 1-ին քարտուղար Ռոբերտ Արզումանյանի և մի խումբ մտավորականների նախաձեռնությամբ: Ձիթողյանների տունը կառուցվել է 1872 թվականին, ինչի մասին վկայում է մուտքի կամարի փականաքարի փորագրությունը: Կառուցող վարպետն է եղել Հարություն Օուզբաշյանը: Ի սկզբանե առանձնատունը պատկանել է հույն քահանայի, որը կիսավարտ վիճակում այն վաճառել է Ղետրոս Ձիթողյանին: Տարիների ընթացքում կառույցը ենթարկվել է բազմաթիվ անպատեհ ձևափոխումների և կորցրել էր իր նախկին վեհաշուք տեսքը:

Շենքի վերականգնողական աշխատանքներն իրականացվեցին Նորաստեղծ հատուկ գիտավերականգնողական արվեստանոցի կողմից /ղեկավար՝ ճարտարապետ Սասուն Գրիգորյան/: Աշխատանքները մեկնարկեցին 1979 թվականին և հաջողությամբ ավարտվեցին 1983 թվականին:

Այսօր թանգարանում կարելի է տեսնել Գյումրի-Ալեքսանդրապոլի պատմությանը, արհեստներին և հոգևոր կյանքին վերաբերվող նմուշներ:





# ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔ /ՄՊԱՆԴԱՐՅԱՆ 24/

20-րդ դար



Բազմաբնակարանային այս բնակելի շենքը քաղաքի կենտրոնական հրապարակը ձևավորող կառույցներից մեկն է: Դեպի հրապարակ ուղղված կառույցի անկյունաձև հատվածը նավի առաջնամաս է հիշեցնում, ինչի պատճառով այն նույնպես անվանում են «Լողկա» շենք:

Վառ նարնջագույն տուֆով աչքի ընկնող եռահարկ բնակելի շենքում արտացոլված են ստալինյան ճարտարապետությանը բնորոշ հիմնական հատկանիշները: Շենքի կոմպոզիցիան կազմված է սուր անկյան տակ հատվող երկու թևերից:

Շենքի ճակատը հագեցված է հայ միջնադարյան ճարտարապետությունից փոխառնված մոտիվներով: Սյուների խոյակները զարդարված են Կենաց ծառը խորհրդանշող նռնենու ճյուղերով:

Ուշագրավ է, որ այս շենքի կառուցումից ընդամենը մեկ տարի անց հայ ճարտարապետներ Գևորգ Քոչարը, Միքայել Մազմանյանը և Նիկողայոս Բունիաթյանը բանտարկվեցին և աքսորվեցին՝ արգելված կոնստրուկտիվիզմի ոճով ստեղծագործելու և պաշտոնական ոճից «շեղվելու» մեղադրանքով:








# ՏԵՔՍԻԼԻ ԱԿՈՒՄԲ, ԱՐԱԳԱԾ ՄԱՐԶԱՀԱՄԵՐՈՎԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏ՝ ՊԵՎՈՐԳ ՔՈՉԱՐ

1930



Այս կառույցը գյուժնու բնակիչները մինչև այժմ անվանում են «Տեքստիլի ակումբ», քանի որ այն կառուցվել է Լենինականի տեքստիլագործների համար: Շենքի կառուցումը սկսվել է 1930-ականներին: Շենքի հեղինակն անվանի ճարտարապետ Պևորգ Քոչարն է:

Նրա աշխատանքը հետագայում ավարտին է հասցրել ծագումով գյուժնեցի՝ ճարտարապետ Սպարտակ Խաչիկյանը: Ակումբի շինարարությունը դադարեցվում է և վերսկսվում է միայն Հայրենական Մեծ պատերազմից հետո: Ակումբը շահագործման է հանձնվել 1962 թվականին: Սպարտակ Խաչիկյանը հիմնականում պահպանել է Քոչարի նախագծի լուծումները:

Անկախության տարիներին ակումբը սեփականաշնորհվել է և փոխել է նախկին գործառույթը: Շենքի նորոգումների պատճառով նրա տեսքն ավելի է տուժել:

2000-ականներին այստեղ ոչ պրոֆեսիոնալ մտահղացմամբ իրականացված ներքին և արտաքին փոփոխություններն ավելի խորացրեցին կառույցի նախնական տեսքից շեղվելու և այն աղճատելու խնդիրը:

